### Ծախք 1892 ամի

| | ր. կ. |
|---|---|
| Տուաւ վարձ լուսարարի . . . . . . . | 72 — |
| Վարձ ժամկոչի . . . . . . . | 34 50 |
| Ի գին եկեղեցական կնքոյ . . . . . . . | 5 50 |
| Առանց վաճառման եկեղեցում այրուած է մում . . | 18 90 |
| Եկեղեցւոյ արձանագրական տոմարների գին . . | 5 40 |
| Վարձ մոմ ածողի . . . . . . . | 13 20 |
| Վարձ ձիոյ և փայտոնի ս. Ստեփաննոսի աջը Սաղխանու վանքից բերելոյ և հանգուցեալ Վահան քհ.-ի թաղմանը . | 10 — |
| Տուաւ Նպաստագրամ Շամախու Օրիորդաց դպրոցին . . | 200 — |
| Տուաւ Նպաստագրամ տղայոց դպրոցին . . . . | 60 — |
| Ամբողջ տարուայ ընթացքում ծախք եղև խունկի, ածուխի նաւթի և զանազան մանրամասն կարևորութեանց . | 69 47 |
| Ծախուց գումարն է | 488 97 |
| Այս ծախքը մուտքի (1598 ր. 85½ կ.) գումարից հանելուց յետոյ մնումէ առ 1 Յունվարի 1893 ամի եկեղեցական մայր գումար . . . . . . | 1109 88½ |
| Համագումար . | 1598 85½ |

Երեսփոխ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԱՏՈՒՐՈՎ

---

## ՀԱՇԻՒ

### ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒԱՑ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԱԼԱԼԵԱՆՑԻ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՄԱՍԻՆ Ի 1892 ամի.

| Մուտք | Տոկոսաբեր Թղթերով ր. կ. | Առ ձեռն Դրամով ր. կ. |
|---|---|---|
| Մնումէր 1-ն Յունուարի 1892 ամի . | 51000 — | 267 03 |
| 1892 թուի ընթացքում գնուած են տոկոսաբեր թղթեր. . . . . | 3000 — | — — |
| Ստացուած է տոկոսիք և շիջած տոկոսաբեր արժեթղթերի վճար . . . . | — — | 3809 34 |
| | 54000 — | 4076 37. |

Ծ ա խ ք

| | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Շիջած են տոկոսաբեր թղթեր . . | 100 | — | — | — |
| Դրամագլխի համար %-աբեր թղթեր գնելու վերայ ծախսուած է . . . | — | — | 3840 | 45 |
| Լրագիրների մէջ դրամագլխի մասին 1891 թուականի հաշիւը տպագրելու համար 24 ր. 48 կ. և հեռագիրների համար Արքունական Դրամատան Տփխիսի Պաշտօնատան ուղղուած . | — | — | 26 | 73 |
| | 100 | — | 3867 | 18 |

Առ 1-ն Յունուարի 1893 ամի առձեռն պատրաստ կայ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Տոկոսաբեր թղթերով . . . | 53,900 | — | — | — |
| Առձեռն դրամով . . . | — | — | 209 | 19 |

Ծանօթութիւն 1. 800 ր. տոկոսաբեր թղթեր, որոնց համար Արքունական Դրամական Մոսկուայի Գրասենեակը վճարել է հաշուետուութեանս տարուայ Դեկտեմբերին 776 ր., մտած են 1893 ամի մուտքի մէջ։ 2 Սկզբնական գումարը 6½ % րուբլու արժողութեամբ պահուած է Արքունական Դրամատան Տփխիսի բաժանմունքում, իսկ մնացեալ գումարները Մոսկուայի Նահանգական Գանձարանում։ Արքեպիսկոպոս Ջալալեանցի դրամագլուխը 1883 թուից յետոյ պիտի շահեցնուի 125 տարուան ընթացքում մինչև 12 միլոն րուբլու չափ գումարի հասնելը, իսկ այնուհետև կը յատկանայ ուսումնարանների կառուցման գործին և թոշակներ սահմանելու զոհաբերողին։

---

## ԹԻՖԼԻԶԻ «ՄԵՏԵԽ» ԲԱՆՏԻ Ս. «ՎԱՐԴԱՆ» ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՆՈՐԱ ՕԾՄԱՆ ՀԱՆԴԷՍԸ.

Կովկասի և Անդր Կովկասի քաղաքների մէջ գտնուած բանտերը զուրկ են հայ բանտարկելոց համար աղօթատուն անգամ ունենալուց, միայն Թիֆլիզն է, որ 40 տարուց ի վեր «Թիֆլիզի Նահանգի կենդրոնական» կոչուած բանտումն մի փոքրիկ, թէև անշուք, եկեղեցի է պահում, և ահա այժմ մի լաւ եկեղեցի ևս ունեցաւ Մետեխ անուանուած բանտումն։ Մետեխն առհասարակ մեր հայերիս համար պատմական մի ուշագրաւ տեղի է դարձած, որովհետև այնտեղ է նահատակուել մեր ս. Վարդանի